

«Ֆրանկոֆոնիայում հեքիաթի շուրջ»

«Միայն սիրտն է սրատես: Ամենակարևորը աչքով չես տեսնի: Լինի դա տուն, աստղ կամ անապատ, դրանց ամենագեղեցիկն այն է, որ աչքով չես տեսնի...»

Փոքրիկ Իշխանը

Սրտով տեսնելն ու ամենագեղեցիկը ընկալելը բոլորին չէ որ տրված է: Դրան հասնելու ամենաուղիղ ճանապարհը գիրքը թերթելն է: Հայաստանի ազգային գրադարանում ընթերցողի ու գրքի մտերմությունը սերտացնող հերթական հանդիպումն էր: «Ֆրանկոֆոնիայում



հեքիաթի շուրջ» միջոցառման շրջանակում Խամաճիկների պետական թատրոնի դերասաններն էին բեմից ընթերցում հատվածներ 20-րդ դարի լավագույն գիրք ճանաչված, ֆրանսերենով գրված գրքերից ամենաշատ կարդացվող եւ թարգմանված Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ Իշխանը» գրքից,

#ընթերցանության_ժամը ուղեկցվում էր անիմացիոն կադրերի ցուցադրությամբ:



Դահլիճում էին Երեւանի տարբեր դպրոցների աշակերտներ ու նաեւ շատ մեծահասակներ...Չնայած, չէ որ բոլոր մեծահասակներն էլ ինչ որ մի ժամանակ երեխաներ են եղել:

Փոքրիկ Իշխանի պատմությունն ունկնդրելուց հետո հանդիսատեսը շարունակեց ճամփորդությունը հեքիաթների եւ գրքերի աշխարհում՝ Ազգային գրադարանի մեծ ցուցասրահում: Ցուցափեղկերում նրանց էին սպասում ֆրանսիական մանկական գրականության լավագույն հրատարակությունները՝ 1840 թվականին հրատարակված հեքիաթներից մինչև 2019 թվականին լույս տեսած պատկերազարդ գրքեր: